SAVE EARTH

# Կլիմայի Փոփոխություն և Հարմարվողականություն

- Ի՞նչ է Կլիմայի Փոփոխությունը
- Ինչպե՞ս է դրսևորվում կլիմայի փոփոխությունը
- Ի՞նչ է կլիմայի փոփոխության հարմարվողականությունը
- Հարմարվողականության ռազմավարություններ
- Քաղված դասեր
- Կապը միջազգային շրջանակների հետ

# Ի՞նչ է կլիմայի փոփոխությունը

Կլիմայի փոփոխությունը համաշխարհային ճգնաժամ է, որն ազդում է էկոհամակարգերի, համայնքների և տնտեսությունների վրա: Այն պահանջում է հարմարվողականության ռազմավարություններ՝ վնասները նվազեցնելու և կայուն զարգացում ապահովելու համար: Այս պրեզենտացիան բացատրում է, թե ինչ է կլիմայի փոփոխությունը, ինչպես է այն դրսևորվում և ինչ է նշանակում հարմարվողականությունը՝ միջազգային օրինակներով և Փարիզի համաձայնագրի համատեքստում:



# Ի՞նչ է կլիմայի փոփոխությունը

Կլիմայի փոփոխությունը եղանակային օրինաչափությունների, ջերմաստիճանի, տեղումների և ծայրահեղ եղանակային երևույթների երկարաժամկետ փոփոխությունն է՝ հիմնականում պայմանավորված ջերմոցային գազերի ($CO_2$ ածխաթթու գազ, մեթան $CH_4$) արտանետումներով՝ վառելիքի այրում, անտառահատում և արդյունաբերություն:

Կլիմայի փոփոխությունը պայմանավորված է ջերմոցային գազերի արտանետումներով՝ հանածո վառելիքի այրումից, անտառահատումից, գյուղատնտեսությունից և հողօգտագործման փոփոխություններից, ինչը հանգեցրել է $CO_2$-ի մակարդակի 400 ppm-ի գերազանցմանը 2013-ին և գլոբալ ջերմաստիճանի 1.1-1.2°C բարձրացմանը:

# Ինչպե՞ս է դրսևորվում
# կլիմայի փոփոխությունը

- **Ջերմաստիճանի բարձրացում:** Գլոբալ ջերմաստիճանի աճը հանգեցնում է ջերմային ալիքների, օրինակ՝ 2023-ին Եվրոպայում ռեկորդային ջերմաստիճաններ մինչև 48°C Սիցիլիայում և Սարդինիայում:
- **Ծայրահեղ եղանակային երևույթներ:** Փոթորիկների, ջրհեղեղների և երաշտների հաճախականության աճ, օրինակ՝ 2023 թվականի մուսոնային ջրհեղեղները Հնդկաստանում և Բանգլադեշում խաթարել են 3.9 միլիոն մարդու կենսապայմանները՝ առաջացնելով տեղահանություն, գյուղատնտեսական բերքի կորուստ, խմելու ջրի աղտոտում և ենթակառուցվածքների վնաս:
- **Համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացում:** 1901-2018 թվականներին համաշխարհային օվկիանոսի մակարդակը բարձրացել է մոտ 20 սմ-ով, սպառնալով ափամերձ գոտիներում բնակվող մոտ 1 միլիարդ մարդու կենսապայմաններին:
- **Էկոհամակարգերի խաթարում:** Կլիմայի փոփոխության հետևանքով կենսաբազմազանության կորուստ, օրինակ՝ Ավստրալիայի Մեծ արգելախութի մարջանների մոտ 50%-ի սպիտակեցում 1995-2017 թվականներին:
- **Սոցիալ-տնտեսական ազդեցություններ:** Կլիմայական փոփոխությունները նվազեցնում են սննդի անվտանգությունը, խորացնում ջրի պակասը և խթանում միգրացիան, օրինակ՝ Սահելի 2022 թվականի երաշտները, որոնք սննդային ճգնաժամ են առաջացրել 38 միլիոն մարդու համար:

# Ի՞նչ է կլիմայի փոփոխության հարմարվողականությունը

Հարմարվողականությունը միջոցառումների ամբողջություն է, որոնք նվազեցնում են կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունները, բարձրացնում դիմակայունությունը և օգտագործում առաջացող հնարավորությունները՝ համատեղելով նախաձեռնող):

# Հարմարվողականության ռազմավարություններ



- **Բնահեն լուծումներ**: Ծառատնկում, կանաչ տանիքների զարգացում (օրինակ՝ Սինգապուրի կանաչ շենքեր) և խոնավ տարածքների վերականգնում՝ էկոհամակարգերի դիմակայունությունն ամրապնդելու համար:
- **Ենթակառուցվածքային հարմարեցում**: Կլիմայակայուն շենքերի կառուցում և ջրհեղեղների դեմ ծովապատնեշների կիրառում, օրինակ՝ Ճապոնիայի ափամերձ պաշտպանական համակարգեր :
- **Ջրի կառավարում**: Կաթիլային ոռոգման և ջրի վերամշակման ներդրում, օրինակ՝ Իսրայելում ջրի 90%-ի վերօգտագործում՝ ջրային պաշարների պահպանման համար:
- **Համայնքային մոտեցումներ**:Տեղի բնակիչների առաջնորդության խթանում և երաշտին դիմակայող մշակաբույսերի օգտագործում, օրինակ՝ Սահելում համայնքների կողմից կլիմայի փոփոխություններին հարմարվող գյուղատնտեսության զարգացում:
- **Միջազգային համագործակցություն**: Ազգային հարմարվողականության պլանների մշակում 80 երկրներում և ֆինանսավորում Հարմարվողականության հիմնադրամից՝ կլիմայակայուն ծրագրերի աջակցության համար:

# ՀԻՄՆԱԿԱՆ

# ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Հաշվետվողականություն

Վաղ միջամտությունները և թափանցիկ մոնիտորինգը նվազեցնում են կլիմայի փոփոխության տնտեսական ծախսերը՝ օպտիմալացնելով ռեսուրսների օգտագործումը:

### Հավասարություն

Խոցելի խմբերի՝ կանանց, երեխաների և բնիկ ժողովուրդների առաջնահերթ ներգրավումը խթանում է սոցիալական արդարությունն ու արդյունավետությունը:

### Համագործակցություն

Պետական, համայնքային և մասնավոր հատվածների ինտեգրված համագործակցությունը կենսական է կլիմայակայունության ամրապնդման համար:

### Ֆինանսավորման բաց

Հարմարվողականության համար տարեկան անհրաժեշտ է 215-387 միլիարդ ԱՄՆ դոլար, սակայն ընթացիկ ֆինանսավորումը զգալիորեն զիջում է համաշխարհային պահանջներին:

# Կապը միջազգային շրջանակների հետ

- Փարիզի համաձայնագիր (2015): Սահմանում է գլոբալ ջերմաստիճանի աճը 1.5–2°C-ի սահմաններում պահելու նպատակ և խթանում է կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված համապարփակ գործողություններ:

- Հարմարվողականության համաշխարհային նպատակ (GGA) և Հարմարվողականության հիմնադրամ: GGA-ն ընդգծում է հարմարվողական կարողությունների ամրապնդումը և խոցելիության նվազեցումը,

Հարմարվողականության հիմնադրամը ֆինանսավորում է զարգացող երկրներում կայունության բարձրացմանն ուղղված տեղական, ազգային և տարածաշրջանային ծրագրեր:

- Զեկույցներ: Տրամադրում են գիտական հիմքեր՝ կլիմայի փոփոխության հետևանքներին հարմարվելու համար արդյունավետ քաղաքականություններ, ռազմավարություններ և ծրագրեր մշակելու նպատակով

# ԱՄՓՈՓՈՒՄ

Կլիմայի փոփոխության հարմարվողականությունը, ներառյալ բնահեն  լուծումները, կլիմայակայուն ենթակառուցվածքները և համայնքային ներգրավումը, նվազեցնում է ջերմաստիճանի աճի, ծայրահեղ եղանակային երևույթների և ծովերի մակարդակի բարձրացման ռիսկերը՝ խթանելով կայուն զարգացումը միջազգային համագործակցության և ֆինանսավորման աջակցությամբ:

SAVE EARTH

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ավդա Սարգսյան ԲԾԻԳ ՊՀ